# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*Նորին Սրբութիւն Տ. Տ. Գէորգ Ե. ամենայն Հայոց Կաթուղիկոսի բարձր հովանաւորութեամբ և Էջմիածնի Յոբելենական Յանձնաժողովի նախաձեռնութեամբ անցեալ 1912 թ. հոկտեմբերի 13-ին տեղի ունեցաւ ս. Էջմիածնում հայ տառերի գիւտի 1500 և հայ տպագրութեան 400-ամեայ միացեալ յոբելեանի բացումը: Ուղիղ մի տարի անց, 1913 թ. հոկտեմբերի 11—14-ին, հանդիսաւորապէս տօնուեց նոյն յոբելեանի փառաւոր տօնը ս. Էջմիածնում:*

*Պատահմամբ չէ, անշուշտ, որ դարեր անցնելուց յետոյ առաջին անգամ մեզ է վիճակւում կատարել հայ տառերի գիւտի և հայ տպագրութեան սկզբնաւորութեան յոբելեանները. հայ կեանքի մի փառաւոր շրջանի—վերածնութեան շեմքումն ենք այսօր, հրճուանքով արձանագրում հայ ժողովրդի ինքնագիտակցութեան, նրա զարթնումի, ոգւոյ լոյս ու ազատագրութեան ձգտելու, քաղաքակիրթ ազգերի շարքը դասուելու ձիգ ու ջանքի փաստը: Եւ որպէս գիտակցող ու լուսաւոր, հայ ժողովուրդը, յանձին իր լաւագոյն զաւակների, պարտաւոր է մի յետադարձ հայեացք ձգել դէպ անցեալը, վերագնահատութեան ենթարկել քաղաքակրթական հին արժէքները և հարկաւոր ու համապատասխան յարգանք մատուցանել հայ կուլտուրայի վաստակաւորներին, հիմնադիրներին ու ստեղծագործողներին: Իսկ ինչ աւելի մեծ քաղաքակրթական արժէք ունի պարփակած հայ կեանքը իր վիրաւոր ու խոցոտուած կրծքում, քան եթէ գիրը, գրականութիւնը, որոնց սկսել է փարել նա խանդաղատանքով ամէն ինչ կորցնելուց, ամէն ինչից զրկուելուց յետոյ: Եւ այսօր 1500 տարուայ անցեալ ունեցող հայ տառը և 400 տարուայ կեանք ունեցող հայ տպագրութիւնը իրաւամբ իրենց արժանաւոր տեղն են գրաւել հայ ժողովրդի երկրպագութեան սեղանի վրայ, նրա սրբութիւն սրբոցում, որի առջև երախտագիտական ջերմ զգացմունքներով խոնարհւելու է շտապել հայը զանազան վայրերից ու կողմերից:*

Ս. Էջմիածնի Յոբելեանական Յանձնաժողովը ամէն միջոց ձեռք էր առել՝ տօնն բոլոր արժանաւոյն շքով ու հանդիսաւորութեամբ կատարելու, պատրաստել էին կոչեր, յայտարարութիւններ հայ լրագրերում, դիմումներ էին եղել զանազան հասարակական հաստատութիւններին ու հիմնարկութիւններին պատգամաւորներով ու ներկայացուցիչներով մասնակցելու, պատրաստել և ցրել էին նաև Մեծ Յոբելեանի տօնակատարութեան կարգը, որպէսզի հեռու վայրերից եկողները հնարաւորութիւն ունենան ճիշտ ժամանակին տեղում լինելու: Այսպիսով, Յանձնաժողովի յայտարարութիւնների ու կոչերի հիման վրայ՝ Նոյեմբերի 11-ին, ուրբաթ առաւօտից, պատգամաւորներն սկսեցին հետզհետէ ժողովուել ս. Էջմիածին: Ճեմարանում ու վանքի հիւրանոցում հարկաւոր պատրաստութիւններ էին տեսնուած ընդունելու հայ ազգի ներկայացուցիչներին, Էջմիածնի թանկագին հիւրերին: Զարդարուած էին վանքն ու ճեմարանը գոյնզգոյն էլեկտրական լապտերներով, դրօշակներով, թարմ ծառերի և ծաղիկների հիւսքերով: Ս. Մեսրոպի և ս. Սահակի մեծադիր նկարները անհրաժեշտ շուք ու գեղ էին ընծայում վանքի զանգակատան արևմտեան երեսին, տեղ տալով իրենց մէջ գոյնզգոյն լապտերներով կազմած Հայրապետական թագ ու գաւազանին: Հարաւային և հիւսիսային կողմերը զանգակատան կրում էին Մեծ Տօներին սովորական «Առ էջ Միածին, հիմն արկ Տաճարին» և «Աղօթից այս տուն կոչել հաստատուն» մակագրութիւնները: Վեհարանի մուտքի ճակատին դրուած էր Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գէորգ Ե-ի նկարը: Մի առանձին կենդանութիւն, կեանք էր առել Էջմիածինը, մանաւանդ որ հետզհետէ հիւրերի ու հանդիսականների առատ բազմութիւն էր հաւաքուել տեսնելու պատգամաւորներին, ներկայ լինելու Ազգային Մեծ Յոբելեանին և գործնական Ալեքսանդրապոլից հրաւիրուած զինուորական երաժշտական նուագախմբով: Մի ջերմ զգացմունքով համակուել էին բոլորը, պատգամաւորները թէ հանդիսատես հիւրերի ամբոխը, ոխն ու ատելութիւնը առժամանակ տեղի էին տուել, չքացել և տարբեր համոզումների, հայեացքների տէր պատգամաւորներն մօտեցել էին իրար: Պատգամաւորներ եկել էին ոչ միայն Կովկասից, այլ և Ռուսաստանից, Տաճկաստանից, Պարսկաստանից, Անգլիայից, զանազան ընկերութիւններից, հասարակական հիմնարկութիւններից ու հաստատութիւններից. կային պատգամաւորներ նաև հայ աւետարանական ու հայ կաթոլիկ համայնքներից, նոյն իսկ ռուս և թուրք պատգամաւորներ:

## ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐՆ ԷԻՆ

| Ազգանուն—անուն | ո՞րտեղից կամ ո՞ւմ կողմից |
|---|---|
| 1. Աբեղեան Մանուկ | Պոլսի հայուհեաց ընկ. և Թոխատի վիճ. |
| 2. Աբիեան Կարապետ | Ատրպատականի թեմական խորհրդի |
| 3. Ազատեան Անուշաւան | «Նոր Մամուլ» և Բալարա գիւղի հասար. |
| 4. Ալթունեան Գէորգ | Ախալքալաքի Ցորբել. յանձնաժ. Թեհրանի հայ գաղ. և Մոսկվայի հայ ուսանող. |
| 5. Ալիբէկեան Տիկին | Կովկասի հայոց որբախնամ ընկերութ. |
| 6. Ազարար Յակոբ | Աղէք. կովկ. միութեան կանանց ճիւղի |
| 7. Ամիրխանեան Յովսէփ | Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան |
| 8. Առաքելեան Արամ | Բագուի դպրոցների հոգաբարձութեան |
| 9. Առաքելեան Համբարձում | Սահմ. ռամկ. կուս. Վասպուր. Ակումբի և «Վան-Տոսպ» շաբաթաթերթի, Պօղոս փաշա Նուպարի, Պոլսի հայոց միացեալ ընկ., Ղարաբաղի թեմ. դպ. և «Մշակի» ու «Արօր»-ի |
| 10. Առաֆելեան Աղէքսան. | Բագուի հայոց հասարակութեան |
| 11. Արարեան Գէորգ | Ախալցխայի ս. Փրկիչ եկ. ծխ. հոգաբար. |
| 12. Արղութեան Իշխան | |
| 13. Աւետիք. ա. Համասփ. | Վաղարշապատի հայոց բարեգ. ընկեր. |
| 14. Աւետոսեան Մարգար | Նոր-Բայազետի ծխական դպրոցի |
| 15. Աֆրիկեան Խաչատուր | Տփխիսի հայ վաճառակ. և Տփխիսի հայ. ազգագր. ընկերութեան |
| 16. Բարգէն վարդապետ | Շուշու հասար. հոգևոր. և Տ. Զաւէն վար. |
| 17. Բագրատ եպիսկոպոս | Սարիղամիշի հայ հասարակութեան |
| 18. Բայսօղլեան Ս. | Կովկասի հայուհեաց որբախն. ընկեր. |
| 19. Բզնունի Խաչատուր | Կարսի ս. եկեղեցու հոգաբարձութեան |
| 20. Բոզարջեան Արշակ | Տփխիսի հայ վաճառականների |
| 21. Բոզդանեան Բ. | Տփխիսի բորսային կոմիտեի |
| 22. Գարեգին վ. Յովսէփ. | «Հովիտ»-ի խմբագրութեան |
| 23. Գէորգ վ. Չէօրէքչեան | Նոր-Նախիջեան. բարեգ. ընկ. Նախադպ. հասակի երեխայոց Նպաստող ընկ. Ռոստովի Իզմիրլեան ընկ. Կարսի վիճակի և հոգևոր. և Տփխիսի հայ եկեղեց. ընկ. |

| | |
|---|---|
| 24. Գիւլպէնկեան Սեռով. | Տփխիսի հայ վաճառականների |
| 25. Գուլամիրեան Աբգար | Երևանի «Խրիմեան» դպրոցի |
| 26. Գրիգորեան Գրիգ. ա.ք. | Բագուի հոգևորականութեան |
| 27. Երամեան Համբարձում | Վանի դպրոցների |
| 28. Եւանգուլեան տիկ. Շուշանիկ | Կովկ. կանանց ընկ. Աղէքս. ճիւղի քաղ. օր. կար ու ձևի դպրոցների մանկավարժ. կազմի և «Խրիմեան աշակերտախմ. ընկ. |
| 29. Եփրեմ եպիսկոպոս | Սուխումի շրջանի հայ հոգևորականութ. |
| 30. Զաքարեան Հմայեակ | Վաղարշապատի եկ.-ծխ. դպ. հոգաբարձ. |
| 31. Զբօրուչիկեան Արշալոյս | Կարսից |
| 32. Եհրամճեան Յակոբ | Աղէքսանդրապոլի Արղութեան օր. դպ. |
| 33. Թաքաղեան Սաղաթէլ | Աղէքս. ս. Լուսաւ. եկ. և «Խրիմեան» դպ. |
| 34. Թադէոսեան Եղիշէ (նկարիչ) | յատուկ հրաւիրուած |
| 35. Թադէոսեան Տիգրան (բժիշկ) | Տփխիսի Գայեանեան օր. դպրոցի |
| 36. Թառայեան Իսահակ | Բագուի հայ լուսաւորական համայնքի. |
| 37. Թառայեան պատուական | Բագուի հայ աւետարանական համայն. |
| 38. Թորոսեան Սահակ | «Հասկեր» և Մոսկվայի ուսանողութ. |
| 39. Իլիւշկին (ռուս) | Բագուի քաղաքային ինքնավարութ. |
| 40. Իսահակեան Կարապետ | Աղէքսանդրապոլի մեշչանների |
| 41. Իսրայէլեան Սարգիս | Երևանի օգտակար գիտելիք. տար. ընկ. |
| 42. Լևոն վարդապետ | Գանձակի հայ հասարակութեան |
| 43. Խալաթեան Կ. | Կովկ. հայոց բարեգործական ընկերութ. |
| 44. Խատիսեան Գէորգ | Տփխիսի բորսային կոմիտեի |
| 45. Խզմալեան Թադէոս | Երևանի Թեմի հայոց եկ.-ծխ դպրոցների |
| 46. Խուդաբաշ. Համազասպ | Երևանի հայոց բարեգործական ընկ. |
| 47. Խօջամիրեան տիկին | Կովկ. հայոց որբախնամ ընկերութեան |
| 48. Ծովեան | Բագուի դպրոց. հոգաբարձութեան |
| 49. Կանայեան Ստեփան | Գօրի հայուհեաց ընկերութեան |
| 50. Կոստան. տ. Վարվառէ | Վաղարշ. հայոց բարեգործ. ընկերութ. |
| 51. Կուսիկեան Կարապետ | Լազ. ճեմար. և Մոսկվայի հայ. եկ. խորհ. |
| 52. Հախումեան Աշոտ | Մոսկվայի հայ ուսանողութեան |
| 53. Համբարձում. Աղէքս. | Աղէքսանդր. Սահականուշեան օր. դպր. քաղաք. օր. կար ու ձևի դպ. և «Խրիմեան» աշակերտախնամ ընկերութեան |
| 54. Հերիմեան Ռափայէլ | Աղէքսանդրապոլից |
| 55. Ջամոյեան Գրիգոր | Կարսի հայոց եկ.-ծխ. դպր. հոգաբարձ. |
| 56. Մալխասեան Ստեփան | Տփխիսի Յովնանեան-Գայեան. օր. դպր. |
| 57. Մահմուդբէկով (Թուրք) | Բագուի քաղաքային ինքնավարութեան |
| 58. Մանուէլեան Մ. | Վաղարշապատի հայոց բարեգործ. ընկ. |

59. Մանուէլեան Ս. Տփխիսի բօրսային կոմիտէտի
60. Մարգարեան Մարտիր. Երևանի Զօրաւոր եկ.- ծխ. հոգաբարձ.
61. Մանդակունի Գր. ա. ք. Տփխիսի քահանայութեան
62. Մարտիր. տ. Հայկան. Տփխիսի հայ ազգագրական ընկերութ.
63. Մարտիրոսեան տիկ. Աղէքս. Կովկ. միութ. կանանց ճիւղի
64. Մարտիրոսեան Մնաց. Տփխիսի հայ վաճառականների
65. Մելքումեան Սարգիս. Կովկ. հայոց բարեգործական ընկերութ.
66. Մէրուանութեան Միք. Բաթումի բարեգործական ընկերութ.
67. Միլեան Արշակ Տփխիսի հայ վաճառականների պետ
68. Միրզայեան Սերովբէ Բագուի հայ լուսաւորական համայնքի
69. Մկրտումեան Մկրտիչ «Պատանի» ալմանախի
70. Մոձոռեան Պետրոս Աղէքս. «Ախուրեան» օրաթերթի
71. Յարութիւնեան Խաչ. Ներսիսեան դպր. մանկավարժ. կազմից
72. Յովհաննիս. Յովհաննէս Բագուի քաղաքային ինքնավարութեան
73. Նազարբէկ. Զաքարիա Աստրախանի թեմական խորհրդի
74. Նազարեան Տիգրան Ղարաբաղի թեմի ծխ. դպր. միջազգային մամուլի բիւրօյի, գեղագիտ. սալօնի և «Ազբիւր-Տարազի» խմբագրութեան
75. Նախշքարեան Սարգիս Աղէքս. ս. Լուսաւ. եկ. «Արփինեան» դպր.
76. Նախշունեան Գրիգոր Տփխիսի հայ վաճառականների
77. Ներսէս վարդ. Տ. Միք. Ախալցխայի վիճ. և Դերբենդի հայ համ.
78. Շահազիզ. Վաչագան Աղէքս. քաղաք. տարրական դպրոցների
79. Չաթալբաշ. Սերովբէ Ն. Նախիջևանի եկեղեց. հոգաբարձութ.
80. Չմշկեան Մակար Տփխիսի մեշչանների
81. Ջամալեան Արշակ «Հորիզոնի» խմբագրութեան
82. Ոսկիգեան Գէորգ Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի
83. Սահակեան Սահակ քհ. յատուկ հրաւիրուած
84. Սաղաթէլեան Միհրան Ախալցխայի ս. Փրկիչ եկ.-ծխ. հոգաբարձ.
85. Սարգսեան Սարգիս Ղամարլուի ծխական դպրոցի
86. Սեֆերեան Գէորգ քահ. Արմաւիրի հայ դպրոցների
87. Սուլխանեան Ստեփան Տփխիսի հայ վաճառականների
88. Վարդանեան Աստուած. Նորագաւթի և Թագա գիւղի դպրոցների
89. Տարախչեան Հմայեակ «Ասպարէզ»-ի խմբագրութեան
90. Տ. Աստուածեան Կոստ. Շամախու հայ աւետարանական համ.
91. Տ. Աստուածատուր Մարգար Տփխիսի հայ աւետարանական համայն.
92. Տ. Գրիգորեան Ռուբէն Տփխ. վանեց. և Գիւլագարակ գիւղ. հաս.
93. Տ. Ղազարեան Համբար. Աղէքսանդ. ս. Փրկիչ եկ.-ծխ. դպրոցի
94. Տ. Ղեւոնդ Վարդան քհ. Տփխիսի քահանայութեան
95. Տ. Մարտիրոսեան տիկ. Աղէքս. Սահականուշեան օր. դպրոցի
Նատալիա
96. Տ. Մարտիրոսեան տիկ. Կովկ. կան. ընկեր. Աղէքսանդ. ճիւղի

97. Տ. Միրայէլեան Հայկ — Բաղուի հայոց մարդասիրական ընկեր.

98. Տ. Յակոբեան Յակոբ — Վերին Ագուլիսի բարեգ. ընկ. ճիւղի և Թովմա առաք. վանքի. հոգ. ծխ. դպր. և անդական յոբելենական յանձնաժող.

99. Տ. Պօղոսեան Աւետիք — Ալէքս. Արղութեան օր. դպրոցի

100. Տ. Պօղոսեան Մամբրէ — Օշականի ս. Մեսրոպի եկեղ. հոգաբարձ.

101. Տ. Սանփանեան Գար. — Սղնախի հայ. ծխ. դպ. և բարեգործ. ընկ.

102. Տ. Սանփանեան Գէորգ — Սղնախի բարեգծ. ընկ. և Տփխիսի Յովհաննեան Գայեանեան օր. դպրոցի

103. Տէրտէրեան Համբարձ. — Ալէքս և Փրկիչ եկ.-ծխ. դպրոցի

104. Րաֆֆի Արամ — Լոնդոնի հայ գաղութի միացեալ ընկ.

105. Փուլինեան օր. — Կալկաթի հայոց որբախնամ ընկ.

106. Բարանթար Ալէքսան. — Պօլսի հայոց միացեալ ընկերութեան

107. Տեղլէ Շահին. Գէորգ. — Նոր Նախիջ. Գալոյեան գպր. մանկավժ. կայմի Ն. Նախիջ. եկեղեց. հոգաբարձ.

108. Էգլեան Գուրգէն — Մոզդոկի դպրոցի

Ինչ-ինչ պատճառներով չեն կարողացել ներկայ գտնուել.

109. Գօլոխանեան Մարկոս — Շուշու դպրոցների հոգաբարձ. կազմից

110. Մելիք Ազարեան Ալէքս. — Պօլսի հայոց Միացեալ ընկերութեան

111. Նաւասարդ. Բագրատ — Վանի հայկ. Բարեսիրական ընկ.

112. Վասմեան Ա. — Կարնոյ ազգային իշխանութեան և երիտասարդութ. կազմից

---

Յոբելենական Յանձնաժողովը պատգամաւորներին դիւրութիւն ընձեռելու և զանազան անախորժ թիւրիմացութիւններից զերծ պահելու համար՝ նախ պատրաստել էր տոմսեր, կարգադրել Յանձնաժողովի նախագահ Տ. Մուշէ վրդ.-ի ստորագրութեամբ, որոնցով պատգամաւորները և թղթակիցներն ու հիւրերը կարող էին ազատ մուտք ունենալ դասախօսութիւնների, հանդէսների ու ճաշկերոյթների. և երկրորդ տպագրել ու բաժանել էր պատգամաւորներին «Կարգաւորութիւն Համազգային Յոբելեանի տօնակատարութեան ու Էջմիածնում» թերթիկը, ուր մանրամասն, ժամ առ ժամ, նշանակուած էին պատարագը, հոգեհանգիստը, դասախօսութիւնը, թէյը, սուրճը, ճաշը և այլն:

Հանդէսն սկսուեց հոկտեմբերի 11-ին, ուրբաթ օրը, երեկոյեան 4½ ժամին. վանքի զանգակների տօնական ղօղանջիւնը դէպի մեհարան հրաւիրեց պատգամաւորներին, որտեղից Նորին Վեհափառութիւնը հանդիսաւոր թափօրով, շրջապա-

տուած Մայր Աթոռի ամբողջ միաբանութեամբ ու պատգա-մաւորներով, ամպհովանու տակ, որը բռնել էին պատգամաւորները, բուրվառի անուշահոտութեան և շարականի քաղցր հնչիւնների ուղեկցութեամբ իջաւ Մայր Տաճար՝ անցնելով ձեմարանի աշակերտութեան և խուռն բազմութեան շարքերի միջով: Աւուր պատաշաճի ժամերգութիւնից և Թարգմանչաց յիշատակին կատարած նախատօնակից յետոյ՝ Նորին Սրբութիւնն առաջնորդուեց վեհարան. պատգամաւորներն էլ ցրուեցին՝ թէյից յետոյ ժողովւելու և ազգային—հասարակական հարցերի շուրջը խորհրդակցութիւն ունենալու նպատակով: Ժողովը տեղի ունեցաւ նորակառոյց մատենադարանի պատկերասրահում. ներկայ էին նաև ոչ պատգամաւոր հիւրեր, որոնք եկել էին լսելու ազգի ներկայացուցիչների կարծիքները օրուայ հրատապ հարցերի մասին: Գ. Հ. Առաքելեանը կարդաց Պօղոս Նուպար փաշայի ուղարկած զեկուցագիրը Հայկական հարցի մասին և ապա Բաքուի Մարդասիրական ընկերութեան պատգամաւոր պ. Հ. Տէր Միքայէլեանի նախագահութեամբ և Ներսիսեան դպրոցի մանկավարժական կազմի պատգամաւոր պ. Ի. Յարութիւնեանի քարտուղարութեամբ սկսուեց խորհրդակցութիւն մի քանի այժմէական բնոյթ կրող խնդիրների մասին: Խորհրդակցութեան կենտրոնը կազմում էր դպրոցական ֆոնդը, նրա կազմակերպութեան, գործադրութեան եղանակի խնդիրը. աւելորդ չեմ համարում յիշել, որ պատգամաւորների մեծ մասը կողմնակից էր ժողովրդի մասնակցութեան ֆոնդի թէ կազմակերպութեան և թէ գործադրութեան խնդրում: Պակաս հետաքրքրութիւն չէր ներկայացնում նաև վերջին օրերը, արդէն հասարակութեան սեփականութիւն դարձած, յարուցուած ծխական դպրոցի ուսուցիչների հարցը: Ժողովը փակուեց, ընտրելով երկու մասնախումբ, որոնցից մէկը պէտք է զբաղուէր յատկապէս յիշածս ուսուցչական խնդրով, միւսը՝ շնորհակալութիւն մատուցանէր Նորին Վեհափառութեանը պատգամաւորներին արած սիրալիր ընդունելութեան համար և հեռագիր-ողջոյն խմբագրելու Պօղոս Նուպար փաշայի անուան: Պատգամաւորները ցրուեցին բարձր տրամադրութեամբ՝ սպասելու հետևեալ օրը մեկնելու Օշական:

Հրաշալի ուխտերթ... Հոկտեմբերեան արեգակի գրաւիչ ճառագայթները մի անուշ ջերմութիւն էին սփռել հինաւուրց պատմական Արարատեան դաշտի վրայ. ախորժելի մեղմ ու շոյիչ օդը բազմաթիւ ուխտաւորներին ու հետաքրքիր հանդիսատեսներ էր գրաւել դէպի Օշական. ճանապարհը տօ-

նական տեղ էր տալիս. Հետաքրքիր էր դիտել մանաւանդ աշակերտ-աշակերտուհիների սայլերի, ֆուրգոնների վրայ և ոտքով՝ ուսուցիչ ուսուցչուհիների առաջնորդութեամբ: Այս և Նորին Վեհափառութիւնը իր շքախմբով…

Օշականի փոքրիկ եկեղեցին գլուխների ծով էր ներկայացնում. որքա՜ն սրտեր էին թրթռում, որքան բերաններ օրհնում Մեծ Լուսաւորիչ ս. Մեսրոպի յիշատակը: Պատարագին երգում էր ճեմարանի քառաձայն խումբը մասնակցութեամբ երգիչ պ. Տ. Նալբանդեանի և ղեկավարութեամբ պ. Ա. Տէր Յովսէփեանի: Պատարագից յետոյ կատարուեց հոգեհանգիստ և ապա Նորին Վեհափառութիւնը շրջապատուած հոգևորականներով և պատգամաւորներով առաջնորդուեց եկեղեցու հարաւային դուռը, ուր տեղ էր պատրաստուած Նորին Սրբութեան, հոգևորականութեան, պատգամաւորների ու ճառախօսների համար: Դուռը, գլխաւոր պատշգամբը, նոյն իսկ տանիքը լցուած էր հոծ բազմութեամբ. ծառերն անգամ ծածկուած էին հիւրընկալել շատերին հետաքրքիր ամբոխից, մանաւանդ որ բացի Էջմիածնից՝ շրջակայքից ևս անհամար ժողովուրդ էր լցուել Օշական. Հէնց միմիայն աշակերտութիւնը Աշտարակից, Փարպիից և այլն անհամար թիւ էր կազմում: Կարգ պահելը չափազանց դժուար էր. և ո՞վ իրաւունք ունէր Մեծ Յոբելեանին արգելելու մարդկանց իրենց սրտի մաքուր զգացմունքները արտայայտելու Մեծ մարդու շիրմի առաջին. ո՞վ թոյլ կը տար իրեն արգելելու հայ մանուկին, հայ պատանուն իր սրտի խորշերում երախտագիտական ցօղերով սնուցած ծաղիկներից պսակ կազմելու և նուէր բերելու Մեծ Վարժապետի գերեզմանին:

Հանդէսն սկսուեց. Նորին Սրբութիւնը գովաբանեց ս. Մեսրոպի և ս. Սահակի ու նրանց շաւղով ընթացողների, նրանց գործը շարունակողների ազգօգուտ գործունէութիւնը, օրհնեց նրանց յիշատակը: Ապա ճառախօսների, ծափահարութիւնների ուղեկցութեամբ մէկ-մէկ առաջ եկան պատգամաւորները և գրուեցին, գովեցին ս. Մեսրոպի և ս. Սահակի գործերը և օրհնեցին նրանց յիշատակը: Հայ ժողովրդի իղձերն ու ցանկութիւններն էին թափ առած դուրս վիժում այդ օր իր ընտրեալների բերանով. հայ ժողովուրդն էր իր երախտագիտական ջերմ զգացմունքներով ողողում Մեծ Մարդկանց — ս. Սահակի ու ս. Մեսրոպի յիշատակները հանձնել պատգամաւորների միջոցով.

| Ազգանուն — անուն | Ո՞րտեղից կամ ո՞ւմ կողմից. |
|---|---|
| 1. Աբեան Կարապետ | Տփխիսի հայ որբախնամ ընկերութեան |
| 2. Ալթունեան Գէորգ | Ախալքալաքի հայ հասարակութեան |
| 3. Ազարար Յակոբ | Տփխիսի հայոց եկ. ծխ. դպրոցների |
| 4. Ամիրխանեան | Ներսիսեան դպրոցի |
| 5. Առաքելեան Հ. | Պօլսի միացեալ ընկերութեան |
| 6. Գէորգ վարդ. Զօրեքչ. | Ն. Նախիջևանի բարեգործ. ընկ. Նախադպրոց. դաստ. նպաստող ընկ., Ռոստ. «Լիզմիրլեան» ընկ., Կարսի հասարակ. ու հոգև. և Տփխիսի հայ երաժշտ. ընկեր. |
| 7. Գրիգորեան Գր. աւ. ք. | Բագուի քահանայութեան |
| 8. Երամեան Համբարձում | Վանի հասարակութեան |
| 9. Թաղէոսեան Տ. | Տփխիսի Գայեանեան օր. դպրոցի |
| 10. Թորոսեան Սահակ | Մոսկ. ուսանողութ., «Հասկերի» խմբ. և Օշականի յոբելենակ. Յանձնաժողովի |
| 11. Խարայէլեան Սարգիս | Երևանի օգտակ. գիտել. տարած. ընկ. |
| 12. Լիոն վարդապետ | Գանձակի հայ հասարակութեան |
| 13. Խզմալեան Թադէոս | Երևանի թեմի ծխական դպրոցների |
| 14. Կուսիկեան Կարապետ | Լազ. ճեմ. և Պետերբ. եկեղց. խորհրդի |
| 15. Մալխասեան Ստ. | Պօլսի ազգ. ժող. ուս. խորհր. և Տփխիսի Յովնանեան դպրոցի |
| 16. Մահմուդբէկով | Բագուի մահմեդականութեան |
| 17. Մանդակունի Գր. աւ. ք. | Տփխիսի քահանայութեան |
| 18. Մելքումեան Սարգիս | Կովկասի հայոց բարեգործական ընկեր. |
| 19. Միլեան Արշակ | Տփխիսի հայ վաճառականների |
| 20. Միրզայեան Սերովբէ | Բագուի հայ լուտերականների |
| 21. Յովհաննիսեան Յ. | Բագուի քաղաքային ինքնավարութեան |
| 22. Նազարեան Տ. | «Աղբիւր Տարազի» |
| 23. Ներսէս վար. Տ. Միքայէլ. | Ախալցխայի փոխանորդութեան |
| 24. Զմշկեան Մակար | Տփխիսի մեշչանների |
| 25. Ջամալեան Արշակ | «Հորիզոն»-ի |
| 26. Ոսկիզեան Գէորգ | Ն. Նախիջևանի թեմ. դպրոցի |
| 27. Տէր Աստուածեան | Հայ աւետարանականների |
| 28. Տ. Գրիգորեան Ռուբէն | Տփխիսաբնակ վանեցիների |
| 29. Տ. Յակոբեան Յակոբ | Վերին Ագուլիսի դպրոցի |
| 30. Րաֆֆի Արամ | Լոնդոնի հայ գաղ. և միացեալ ընկեր. |

Դժուար է մի առ մի թուել այն բոլոր ցանկութիւններն ու բարեմաղթութիւնները, որ արտայայտուեցան այդ օրը. մի

բան մեզմէն նկատելի էր. կար մի ընդհանուր խաւարում կէտ, դէպի որը ուղղուած էին ճառախօսների իրենց հայեացքը Հայ ժողովրդի կրթութեան դաստիարակութեան, բարոյականու-թեան և լուսաւորութեան խնդիրն էր բոլորի մտահոգութեան կեդրոնը կազմում։ Հայ բանախօսները՝ աշխարհաբար մե-տաղանի փայլով, Հայ ուսուցիչը իր բազմերանգ սած, արտա-հայտած գաղափարների խղճով, Հայ մանկավարժը գրքերանի ֆոնդին օգնած լինելու ցանկութեամբ միմեայն մի նպատակ էին անսնուած մինչդեռ մեզ Հայ ժողովրդի բոլոր դասակարգերին անխտիր հարազատակից լինելու եւրոպական զարգացման և բան սրբազան կուլտուրայի բարիքներին։

Սակայն արտայայտութեամբ ու դաշ սրտով ցուեցին հան-դիսականները։ Պատգամաւորները հաւաքուեցին նախաձեռ-ղութեան անձնաւորներից մէկում և չէր ժամանակից մնաց կող ու պատրաստ ու Էջմիածին վերադառնալու՝ հրաժեշտի ու-ջաղն տուեցին Մեծ Մասիսի — ու Մեծ Աղբարի գերեզմանին։ Նորի Սըրութիւնը շրախմբով, առաջ պատգամաւորներին, հանդիսա-կանները ու ուխտաւորները վերադարձան Էջմիածին. ճանա-պարհը նորից կենդանութիւն առաջաւ. կառքեր — հետիոտն-քեր, ֆուրգոններ ու սայլեր, հեծեալ և ձիաւորներ բանե-ցին ճանապարհի ամբողջ երկարութեամբ և մատաղ սրտերից դուրս թռչող ուրախ բացականչութիւնները մի անգամ եւ խանդավառեցին պատմական տապարի հինաւուրց հանդստու-թիւնն ու խաղաղութիւնը։ Երգ ու կանչով, խինդ ու ծիծա-ղով հանդիսականները, մանաւանդ աշակերտութիւնը, մտան Վաղարշապատ գիւղը լուսաւոր մթնով, երբ արդէն պատ-գամաւորները և հիւրերից շատերը դաշ մի հանգստութիւն առած իրենց խանդաղած մարմնին՝ իջել էին ճաշի փառքի սե-ղանատան դահլիճը հաւաքուած։ Պէտք է ասել, որ ճաշերն ու նախաճաշերն առհասարակ շատ ուրախ էին անցնում, շնորհիւ գեղեցիկ բաժակաճառերի և մանկական ու ... Այդ օրն առաջարկեցան Հայ գրի ու գրականութեան, Հայ մայրերի, Հայ դերասանների, Հայ ազատութեան զարգացման ու ա-ռաջադիմութեան կենացները։

Նոյն օրը երեկոյեան գերազանց Տ. Կարապետ Եպիս-կոպոսը զատախօսեց պատգամաւորներին և հիւրերին Հայ գրականութեան մասին՝ կանգ առնելով առանձնապէս մեր թարգմանական գրականութեան վրայ*։ Այնչ նորագոյ

* [illegible]

ժամանակագրական պատկերացում տեղի էր ունենում Տ. Նա-լբանդեան եկեղեցական հետաքրքրական դասախօսութիւնը, դուրսը—վանքի բակում մի կատարեալ ժողովրդական հան-դէս էր. գոյնզգոյն լապտերներով զարդարուն բակում զբօ-նում էր ահագին բազմութիւն՝ մեծ հաճոյք զգալով շրջակայ գիւղերից եկած գեղջուկ-գեղջկուհիների շրջապարերով, որ «յամրանանան կերթայ ու կուգայ», և օդում, բարձրում մերթ գեղարուեստական, մերթ խեղկատակ շարժումներ գործող հրթիռների պայթիւնով: Ուշ գիշերը միայն կարող եղաւ ցրուել զբօսնող հոծ բազմութիւնը և առժամ հանգիստ պար-գևել վանքում ապրողներին այն պայմանով, որ հետևեալ օրը նորից տեղի ունենայ նոյն հրճուանքն ու զուարճութիւնը աւելի մեծ թափով, աւելի մեծ ուժով:

Կիրակի առաւօտեան Նորին Սրբութիւնը շրջապատուած շքախմբով իջաւ Մայր Տաճար, երգում էր ձեմարանի քառա-ձայն խումբը և երգիչ պ. Տ. Նալբանդեանը: Պատարագից յետոյ կատարուեց հայրապետական մաղթանք և ապա Նորին Վեհափառութիւնը, միաբանները և պատգամաւորները առաջ-նորդուեցին ձեմարան պատուելու իրենց ներկայութեամբ Մեծ Յոբելեանի առթիւ ձեմարանի հանդիսարանում կազմած հան-դէսին: Հանդէսը բաց արեց Նորին Վեհափառութիւնը, ապա խօսեց ձեմարանի տեսուչ գեր. Բագրատ եպիսկոպոսը՝ ծան-րանալով առանձնապէս ձեմարանի լսարանական-մանկավարժ-ական բաժնի առանձնացնելու և ըստ ամենայնի իր կոչման բարձրութեամբ հասցնելու վրայ: Ըստ հայր Տեսչի ձեմարանի լսարանական բաժինը պէտք է դարձնել մի, եթէ կարելի է ասել, հայաստանեան համալսարան, որտեղից ուսանող հա-յագէտները կարողանան պաշտպանել ու զարկ տալ բուն ազգային-հայկական կուլտուրային երկրի զանազան մասերում: Երկրորդ բանախօսութիւնը ձեմարանի ուսուցիչ պ. Գ. Ալ-թունեանինն էր. Ճառախօսը բացատրելով տօնի նշանակու-թիւնը, գրի ու տպագրութեան դերը պատմութեան մէջ՝ շեշտեց ազգային սեփական կուլտուրայի նշանակութիւնը մասնաւորապէս ազգի և ընդհանրապէս մարդկութեան օգտի տեսակէտից: Խօսեց նաև ձեմարանի ուսուցիչ բարձր. Մեսրոպ վարդապետ՝ նիւթ ունենալով բարբառների խնդիրը Ե. դա-րում. դասախօսի կարծիքով պէտք է որ Ե. դարում բարբառ-ներ գոյութիւն չունենային հայերի մէջ, գոնէ այդպէս թւում էր հայր դասախօսին: Մէջ ընդ մէջ արտասանւում էին ոտա-նաւորներ, քառաձայն խումբն էլ երգում էր, ձեմարանի երա-ժշտութեան ուսուցիչ պ. Ս. Տէր Յովսէփեանի ղեկավարու-

թեամբ: Առանձնապէս լաւ տպաւորութիւն թողեց ուսանողներից «Անդրադէտը» և երգերից «Անձրևն եկաւ» խմբերգը: Քաղցր տպաւորութեամբ ցրուեցին հանդիսականները՝ ցանկանալով, անշուշտ, որ ճեմարանը դառնայ իրօք հայ բարձրագոյն դպրոց, լուսոյ ջահ հայ կեանքում և լուսաւորէ մեր մութ ու խաւար անկիւնները:

Հետաքրքրութեամբ սպասում էինք ճաշի հրաւէրին. այդ օրը նորին Վեհափառութիւնը պէտք է պատուէր իր ներկայութեամբ պատգամաւորներին և հիւրերին. պէտք է առաջարկուէին կենացներ ու բարեմաղթութիւններ, պէտք է կարդացուէին սեղանատանը հայ ժողովրդի հեռագրներով ուղարկած ջերմ բաղձանքներն ու շնորհաւորութիւնները: Պատգամաւորներն ու հիւրերն արդէն տեղաւորուել էին սեղանատանը, երբ ժամանեց նորին Վեհափառութիւնը. հիւրերը ոտքի կանգնեցին. ապա սկսուեց սովորական ճաշը: Առաջին բաժակաճառն արտասանեց Վեհափառ Հայրապետը. նա առաջարկեց Թագաւոր Կայսրի կենացը, որ ընդունուեց ուռայով հանդիսականների և ռուսական ազգային հիմնի երեք անգամ նուագումով զինուորական երաժշտախմբի կողմից: Երկրորդ բաժակն առաջարկեց Ալ. Քալանթար նորին Վեհափառութեան կենացը: Երրորդ բաժակն առաջարկեց Վեհափառ Կաթողիկոսը Կովկասի Փոխարքայ Կոմս Վորոնցով-Դաշկովի կենացը և ապա շարունակ առաջարկուեցան ուրիշ կենացներ, որոնք սովորական են նման հանդիսաւոր ճաշկերոյթների ժամանակ: Բաժակաճառներից յետոյ պ. Արամ Րաֆֆին, և պ. Սոոնիկեան կարդացին հեռագիրների մի մասը, իսկ միւս մասի համար յիշատակեցին, թէ որտեղից և ում կողմից են ուղարկուած: Գ. Թէլիզեան կարդաց Ն. Նախիջևանից ստացուած հեռագրներից միայն մի քանիսը: Դժուար է մի առ մի տալ հեռագրների բովանդակութիւնը. մանաւանդ որ ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ ինչ ցանկութիւններ կարող էր արտայայտել ժողովուրդը մի այդպիսի համազգային մեծ տօնի առիթով: Կարելի է յիշատակել միայն, որ Խարբերդում, ինչպէս հեռագրում է բարձր. Պասկ վարդապետը, ճեմարան են բացել նորին Վեհափառութեան հովանաւորութեան տակ, Վիէննայից էլ ցանկութիւն են յայտնել ճեմարան ունենալու Հայաստանում: Այստեղ կը բաւականանանք առաջ բերել, թէ որտեղից և ում կողմից են տրուած հեռագրերը:

## ՀԵՌԱԳՐՆԵՐ

| Ո՞րտեղից | ումի՞ց |
|---|---|
| 1 Փարիզից | Պօղոս Նուպար փաշայից |
| 2 Կ. Պօլսից | Պատրիարք. տեղապահից |
| 3 Կ. Պօլսից | Ազգ. ժող. ատենապետ Տաղաւարեանից |
| 4 Կ. Պօլսից | Յոբել. յանձնաժ. Նախ. Յ. Դիմաքսեանից |
| 5 Էրզրումից | առաջնորդ Սմբատ եպիսկոպոսից |
| 6 Բրուսայից | առաջնորդ Սահակ վարդապետից |
| 7 Զմիւռնայից | առաջնորդարանից և յոբելեանակ. յանձնաժ. |
| 8 Խարբերդից | առաջնորդ Պսակ վարդապետից |
| 9 Օրդու (Սամսոնից) | Թաղական խորհրդից |
| 10 Ամասիայից | առաջնորդից |
| 11 Վանից | Վարագայ հոգաբարձութիւնից |
| 12 Դիարբեքիր | Հայոց առաջնորդական փոխանորդից |
| 13 Սամսոն | Յոբելեանական յանձնախմբից |
| 14 Այնթապ | բոլոր հայութիւնից նաև բողոքականներից |
| 15 Երզնկա | հայ հասար. Մելքիսեդեկ վարդ. Հովւեանից |
| 16 Բիլէճիկ | հայ հասարակ. առաջնորդական տեղապահ. |
| 17 Խաչ Բողան (Վանի թաղ) | Վասպուրականի հայութեան-Սոփակեանից |
| 18 Սեբաստիայից | Հայոց, Ամերիկական, կաթոլիկ, Սանասարեան դպրոց. որբանոց. երկու սեռի աշ. ունեցող հաստատութեանց կողմից։ |
| 19 Կոնիա | առաջնորդ. փոխանորդ Մովսէս քահանայից |
| 20 Ադրիանապօլսից | առաջնորդ Դուրեանից և ժողովրդից |
| 21 Խարբերդ | Պսակ վարդապետից |
| 22 Սվազից | Թեմի կազմից փոխանորդի միջոցով |
| 23 Վիեննայից | Յոբելեանական Յանձնաժողովից. |
| 24 Դօչանից (Խորաս.) | մի բուռն հայերից |
| 25 Փարիզ | Զօպանեանից |
| 26 Բագու | Վասմեանից ի դիմաց Վարագի հայ ժող. |
| 27 Բոստոն | ազգ. ռամկավարներից |
| 28 Փարիզ | հայ համայնքից |
| 29 Ֆիլիպպօպոլ | Գրասիրաց ընկերութիւնից |
| 30 Թէհրան | Հայ համայնքից |
| 31 Թավրիզ | երեք դպրոց. մանկավարժակ. խորհուրդ. |
| 32 Ամերիկա (Որչես.) | կենդրոնական վարչութիւնից |
| 33 Բոստոն | «Հայրենիք» թերթից |

34 Բոստոն — ազգային ռամկավարներից

35 Բոստոն — Ամերկ. հայկ. ընդ. միւթ. քարտ. Բիւր-գեանից

36 Ջիբուտից (Եթով.) — Հայ գաղութից Արբերեանի միջոցով

37 Գահիրէ — ազգ. կենտր. կոմս.

38 Գահիրէ — Միացեալ հայ կուսակցութեանց կողմից

39 Ռուսչուկ — Յօբելեանական յանձնաժողովից.

40 Ռաշտ — հոգաբարձութիւնից ի դիմաց հասարակ.

41 Ժնև — Մնացական Խունունցից

42 Տփխիս — Վրաց ազն. պարագլ. իշխան Աբխազից

43 Տփխիս — Յունաց դրամատիկական ընկերութեան

44 Տփխիս — Ղուկասեան պատմ. թանգարանի կոմիտետի

45 Տփխիս — «Տիֆլիսսկի Լիստոկ»ի խմբագրութիւնից

46 Տփխիս — աղքատ երեխայոց օգնող «Լոյս» ընկեր.

47 Տփխիս — Հայ կանանց «Մեղու» ընկերութեան

48 Տփխիս — Քահանայական ապահով. ընկերութեան

49 Պետերբուրգ — Եկեղեցական խորհրդի

50 Բագու — Կուլտուրական միութեան

51 Աստրախան — Եկեղեցական հոգաբարձութեան

52 Բագու — Կուլտուր. միութեան գպրոցակ. սեկցիայի

53 Օդեսսա — հայ գաղութի և եկեղեցական խորհրդի

54 Պետերբուրգ — հայ կրուժոկի

55 Աստրախան — հայ գրական գեղարւեստական ընկերութ.

56 Օդեսսա — Նովորոսսիյսկի կայս. համալս. հայ ուսանող.

57 Կիև — հայ ուսանողութիւնից

58 Մոսկվա — Առևտրական ինստիտուտի հայ ուսանողութ.

59 Կիև — Առևտրական ինստիտուտի հայ ուսանող.

60 Բագու — «Բագու» թերթի խմբագրութիւնից

61 Բագու — «Կասպիյ» թերթի խմբագրութիւնից

62 Բագու — հայ հրատարակչական ընկերութեան

63 Եկատերինոդար — հայոց բարեգործական ընկերութեան

64 Եւպատորիա — Բարեգործական ընկերութեան վարչութ.

65 Ախալցխա — հայոց բարեգործական ընկերութեան

66 Թելաւ — բարեգործական ընկերութեան

67 Գորի — բարեգործական ընկերութեան

68 Սղնախ — բարեգործական ընկերութեան

69 Հին-Ղրիմ — բարեգործական ընկերութեան

70 Լագոդա — բարեգործական ընկերութեան

71 Զալոր — բարեգործական ընկերութեան

72 Աստրախան — հայ հոգևորականութիւնից

73 Գանձակ — հայ հոգևորականութիւնից

| | |
|---|---|
| 74 Եւպատորիա | Անանի միաբանութիւնից |
| 75 Ախալցխա | Հոգևոր դասից |
| 76 Բաթալբաշինսկ | մի խումբ քաղաքացիներից |
| 77 Արմավիր | բանուորութիւնից |
| 78 Տաթև | Հոգևոր կառավար. և Վանեան վարժարանից |
| 79 Գորիս | Հայ հասարակութիւնից |
| 80 Կաղզուան | Եկեղեցու միաբանութիւնից |
| 81 Բաթում | Հոգաբարձութիւնից |
| 82 Տփխիս | մեշչաններից |
| 83 Տփխիս | Քաղաքային վարչութեան մասնակցողն. |
| 84 Ալեքսանդրապոլ | Յոբելինական Յանձնաժող. և Հոգաբարձ. |
| 85 Կարաուրգան | Յոբելինական Յանձնաժողովից |
| 86 Գորիս | Յոբելինական Յանձնաժողովից |
| 87 Կամարլու | Զանգ ընկերութեան վարչութեան |
| 88 Մօսկվա | Լազարեան Ճեմ. ուսուցիչն., աշակերտ. և մօտիկ ազգի հաւաքուած հիւրերից |
| 89 Տփխիս | Կանանց բարձր կուրս. դիրեկտոր պրոֆ. Բրագոմիրովից |
| 90 Աստրախան | Հայոց դպրոցի ուսուցչութիւնից |
| 91 Բաքու | Հայոց դպրոցներից |
| 92 Աստրախան | Աղաբաբ. դպրոցի հոգ. և մանկավ. կազմ. |
| 93 Բաթում | Հայ կաթոլիկների դպրոցից |
| 94 Եկատերինոդար | Հայոց դպրոցի հոգաբ. և մանկավարժ. կազմ. |
| 95 Մոզդոկ | Հոգաբարձական և մանկավարժ. կազմերից |
| 96 Սաղեան (Շամախի) | Վանական «Բուդաղեան» դպրոցից |
| 97 Կզլար | Հոգաբարձ. մանկավարժ. կազմ. և աշակերտ. |
| 98 Ալեքսանդրապոլ | Հոգաբարձական և մանկավարժ. կազմերից |
| 99 Հին Նախիջեւան | Ծխական դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհին. |
| 100 Թէոդոսիա | Հայոց դպրոցից |
| 101 Սիմֆերոպոլ | Հայոց դպրոցի հոգաբարձութիւնից |
| 102 Սեւաստոպոլ | Հայոց դպրոցի ուսուցչական խմբից |
| 103 Արմավիր | Հայոց դպրոցի ուսուցչութիւնից և աշակեր. |
| 104 Եւպատորիա | Հայոց դպրոցի հոգաբ. և ուսուց. կազմ. |
| 105 Թելաւ | Հայոց դպր. հոգբ. մանկ. կազ. և աշակերտ. |
| 106 Դերբենդ | եկեղեց. և դպրոցական հոգաբարձութիւն. |
| 107 Նուխի | դպրոցի հոգաբարձ. և մանկավարժ կազմ. |
| 108 Հին Կրիմ | Հայ հասարակութ. և դպրոցի հոգաբարձ. |
| 109 Օդեսա | Հասար., հոգաբարձ. և մանկավարժ. կազմ. |
| 110 Արդահան | Հասար., հոգաբարձ. և մանկավարժ. կազմ. |
| 111 Գորիս | Հոգաբ. մանկավարժ. կազմ. և աշակերտ. |

| | |
|---|---|
| 112 Օրդուբադ | Կաքաւաբերդի դպրոցի մանկավարժ. խմբ. |
| 113 Իգդիր | հոգաբարձ. մանկավարժական կազմերից |
| 114 Դամարլու | Դամարլուի և շրջ. գիւղ. դպ. մանկ. խմբ. |
| 115 Սուրամ | հոգաբարձ. և մանկավարժական կազմերից |
| 116 Կվիրիլի | Զիարի բարեգ. ընկ. հոգ. ուսուց. աշ. կող. |
| 117 Կախաւան | դպրոցի հոգաբարձութիւնից |
| 118 Կախաւան | դպրոցի ուսուցչական խմբից |
| 119 Շրվանանց գիւղ | դպրոցի վարչութիւնից |
| 120 Քարվանսարա | դպրոց հոգաբ. և մանկավարժ. կազմերից |
| 121 Սևագոր (Զանգ. գ.) | դպրոցից |
| 122 Վարդաշէն | հոգաբարձ. և մանկավարժական կազմերից |
| 123 Շուլավէր | հայոց ծխական և տեղական դպրոց. կող. |
| 124 Բագու | իգական գիմնազ. IV դաս. աշակերտուհին. |
| 125 Խարբին | հայերից |
| 126 Խարկով | հայ գաղութից |
| 127 Բելց | հայ համայնքից |
| 128 Վարոնեժ | հայ գաղութից |
| 129 Ստաւրոպոլ | ծխականներից |
| 130 Գեօրգիեվսկ | հայ գաղութից |
| 131 Տաշքենդ | հայ համայնքից |
| 132 Թէոդոսիա | Տէր Վահան քահանայից և նրա ծխականե. |
| 133 Քութայիս | հայ համայնքից |
| 134 Արմաւիր | հայ հասարակութեան կողմից |
| 135 Ալէքսանդրոպոլ | հայ կաթոլիկներից |
| 136 Ալէքսանդրոպոլ | հայ համայնքի և Խաչվանքեան քահ. կող. |
| 137 Հին Նախիջևան | հայ համայնքից Սիոն վարդապետի միջոց. |
| 138 Ախալցխա | հայ համայնքի Մովսիսեանի և Ղազար. միջ. |
| 139 Ախալքալաք | հայ համայնքից |
| 140 Արտոթուման | հայ համայնքից |
| 141 Օլթի | հայ հասարակութիւնից |
| 142 Ռոմանովկա | հայ գաղութից |
| 143 Կոկանդ | հայ հասարակութիւնից |
| 144 Օրդուբադ | Մեղրիի դպրոցի և հասարակութեան կողմ. |
| 145 Երևան | Բաշ-Գեառնի գիւղի համայնքից |
| 146 Խանքենդ | հայ հասարակութիւնից |
| 147 Շուլավէր | հայ հասարակութիւնից |
| 148 Ջալալ-օղլի | հայ հասարակութ. և դպրոցի հոգաբարձ. |
| 149 Ղզլարւստ | հայ համայնքից |
| 150 Նոր Նախիջևան | քաղաքագլուխ Խադանեանից |
| 151 Ռոստով | բարեգործ. ընկեր. նախագ. Չալխուշեանից |
| 152 Նոր Նախիջևան | դպրոցական ֆոնդի Ցանձ... |

| | | |
|---|---|---|
| 153 | Նոր Նախիջևան | Թեմական դպր. հոգաբ. մանկ. կազմերից, աշակերտութ. և հայ հասարակութիւնից |
| 154 | Նոր Նախիջևան | «Լոյս» Շաբաթաթերթից |
| 155 | » » » | Ս. Խաչ վանքի Վանական Կառավարութ. |
| 156 | » » » | Հոգևոր կառավար. և հոգևորականութիւն. |
| 157 | » » » | կանանց որբախնամ ընկերութիւնից |
| 158 | » » » | Արհեստաւորաց դպրոցի հոգաբարձութ. |
| 159 | » » » | «Հախիխիմեան» դպ. հոգաբ. և մանկ. կազ. |
| 160 | » » » | «Ս. Սանդխտեան» դպ. հոգ. և մանկ. կազ. |
| 161 | » » » | «Ս. Համբարձման» դպ. հոգ. և մանկ. կազ. |
| 162 | » » » | «Ս. Թէոդորոսի» դպր. հոգ. և մանկ. կազմ. |
| 163 | » » » | փոխադարձ վարկի ծառայողներից |
| 164 | » » » | բժշկապետ պ. Յակոբ Միրզայեանից |
| 165 | » » » | պ. Փիլիպոս Վարդանեանից |
| 166 | » » » | բարձր. Վահան վարդապետից |
| 167 | » » » | բժիշկ Անդրէաս Սալախեանից |
| 168 | » » » | Մինաս Բալաբանեանից |
| 169 | Ռոստով | Յովհաննէս Շապոշնիկեանից |
| 170 | Նոր Նախիջևան | Յ. Խաթրանեանից և Կ. Խօջայեանից |
| 171 | » » » | երեցփոխ Զուգոյեանից |
| 172 | » » » | Մարկոս Խաչանդարեան |
| 173 | Ռոստով | Սողոմոնեանից |
| 174 | Զալտըր | Յ. Քրիստոսատուրեան և Գ. Բարդողչեան քահանայից |
| 175 | Ռոստով | «Իգմիրլեան» ընկերութիւնից |
| 176 | » » » | բարեգ. ընկերութ. վարչութ. Նախագահից |
| 177 | Տփխիս | առաջնորդ գեր. Մեսրոպ եպիսկոպոսից |
| 178 | Քիշնև | Բեսարաբիայի թեմ. առաջ. և մի քանի անձ. |
| 179 | Բագու | առաջնորդ Անանիա եպիսկ. և ժողովրդից. |
| 180 | Շուշի | թեմի կառավարիչ Տ. Զաւէն վարդապետից |
| 181 | Երևան | Նահանգապետ գրաֆ Տիզենհաուզէնից |
| 182 | Տփխիս | Քաղաքագլուխ Խատիսեանից |
| 183 | Շուշի | քաղաքագլուխ Քալանթարեանից |
| 184 | Ալէքսանդրոպոլ | Քաղաքագլուխ Կամսարականից և հասարկ. |
| 185 | Երևան | Մելիք Օհանջանեանից |
| 186 | Թարթառ | խան Աղնախակիից |
| 187 | Պետերբուրգ | պրոֆ. Վարդանեանից |
| 188 | Կիև | պրոֆ. Սողոմոն Եղիազարեանից |
| 189 | Մոսկվա | Ալէքսանդր Տարասովից |
| 190 | Տփխիս | Սամսոն Յարութիւնեանից |
| 191 | Տփխիս | մայրապետ Թայիրեանից |

| | |
|---|---|
| 192 Տփխիս | բժշկապետ Նաւասարդեանից |
| 193 Ալէքսանդրապոլ | Լեոն Սարգսեանից |
| 194 Բագու | Տիգրան Յովհաննիսեանից |
| 195 Տփխիս | Յովհաննէս Սպենդիարեանից |
| 196 Տփխիս | Յովհաննէս Թումանեանից |
| 197 Տփխիս | Յովհաննէս Տէր Միրաքեանից |
| 198 Մոսկվա | Յովհաննէս Բալեանից |
| 199 Տփխիս | Լեոն Մելիքսէթբէկեանից |
| 200 Երևան | իրաւաբան Պետրոսեանից |
| 201 Արմաւիր | Ջաւադ բէկ Բալուղեանից |
| 202 Բագու | մի խմբից-Յակոբջանեան, Յակոբեան ևայլն |
| 203 Մոսկվա | գերասան Շահխաթունուց |
| 204 Բագու | Խօջամիրեանից |
| 205 Տփխիս | Շամչինեանից |
| 206 Կիև | Յովհաննէս Յարութիւնեանից |
| 207 Ալլահվերդի | Արշակ Բաբեանից |
| 208 Մոսկվա | բժիշկ Ս. Շահնազարեանից |
| 209 Եարասլաւ | մի խումբ ուսանողներից |
| 210 Սղնախ | հայոց դպրոցի ուսուցչուհուց |
| 211 Սղնախ | մի խումբ հայուհիներից |
| 212 Տփխիս | Կալգին ճարտարապետից |
| 213 Արմաւիր | Յեթվաջեանից |
| 214 Ալէքսանդրապոլ | Խալաթեան քահանայից |
| 215 Իգդիր | Բայազետի գործակալ Տէր Ներսէս քահ. |
| 216 Արդուին | բարեկարգիչ Տէր Գրիգոր քահանայից |
| 217 Թառթառ | Գէորգ Մուրադեանից |
| 218 Մերվ | Մելիքսեդեկ Տէր Յակոբեանից |
| 219 Տաշքենդ | Տէր Մարկոս քահանայից |
| 220 Բաշնորաշէն | գործակալ Կարապետ Շահնազարեանից |
| 221 Գօնչեգիտ | երեցփոխ Գրիգորեանից և Աբրահամ. քհ. |
| 222 Գօրի | Արգար Բարամեանից |
| 223 Իւզովկա | Դաւթեան քահանայից |
| 224 Արմաւիր | Աօլանեանից, Աղիզբէկեանից և Տ. Աւետ. |
| 225 Գօրիս | «Սասուն» տպարանատէրերից |
| 226 Գօրիս | Թղթակիցներ Սաղանդարեան և Պարոնեան |
| 227 Գրակալա | Գօրու հայոց դպրոցի դասատուներից |
| 228 Գանձակ | բանտարկեալների կողմից Խօջայեան քահ. |
| 229 Իգդիր | մի խմբից |
| 230 Իզմայլով | մի խումբ հայերից |
| 231 Իգդիր | մի խումբ Իգդիրմաւեցիներից |

Այս հեռագրերից մի երկուսը դրամական նուէրի լուր են տալիս յօգուտ դպրոցական ֆօնդի. այսպէս օրինակ Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքի կառավարութիւնը 5000 ռուբլի է յատկացնում դպրոցական ֆօնդին, որից 1000 ռուբլին ուղարկում է հեռագրի հետ, իսկ մնացածը թողնում է ուղարկելու յետոյ, հայր Վահան վարդապետը դարձեալ Նոր Նախիջևանից ուղարկում է 100 ռուբլի և այլն։ Հեռագրների թեթև կերպով աչքի անցնելը բաւական է պարզելու համար մեզ, որ աշխարհիս զանազան կողմեր ցրուած հայերը—Բոստոնից Ջիբուտի, Լոնդոնից Թէհրան, Փարիզից Եգիպտոս—զգալով տօնի վեհութիւնն ու վսեմութիւնը՝ աշխատել են միանալ Կենդրոնում գտնուողների հետ իրենց ցանկութիւններով, շնորհաւորութիւններով ու բարեմաղթութիւններով։ Կարելի է համարձակ ասել, որ իրօք այս Մեծ Յոբելեանի տօնակատարութիւնը համազգային բնոյթ էր կրում։

Հեռագրների ընթերցումից և ծափահարութիւնից յետոյ, երեկոյեան ժամը 9-ին, բոլոր պատգամաւորները գնացին Վեհարան, ներկայացան Վեհափառ Կաթողիկոսին և յայտնեցին իրենց շնորհակալութիւնը Նորին Սրբութեանը Համազգային Մեծ Յոբելեանի տօնը ս. Էջմիածնում կազմակերպելու և իրենց—պատգամաւորներին ցոյց տուած հիւրասիրութեան համար։ Վեհափառը ընդունեց պատգամաւորների շնորհակալութիւնը, օրհնեց բոլորին և յայտնեց, որ համաձայն պատգամաւորների ճաշի ժամանակ արտայայտած ցանկութեան՝ խորին հպատակութեան հեռագիր է ուղարկել Ն. Մ. Թագաւոր Կայսրին և Կովկասի Տ. Փոխարքային։ Պատգամաւորները շնորհակալութիւն յայտնելով այդ առթիւ ևս և սրտախառն հրաժեշտ տալով Վեհափառ Հայրապետին՝ իջան և քիչ յետոյ գնացին ձեմարանի հանդիսարան՝ լսելու Տ. Գարեգին վարդապետի դասախօսութիւնը—«Գրչութեան արւեստը Հայոց մէջ»։ Հայր դասախօսը բացատրելով հնագրութեան արժէքը, որպէս գիտութեան, անցաւ մի առ մի նիւթի (պապիրոս, մագաղաթ, թուղթ, թանաք և այլն), գրելու գործածութեան, կազմի և պահպանութեան, մատենադարանների, ստացողների և հովանաւորողների, գրչութեան դպրոցների պատմութեանը և վերջացրեց հայ գրի զարգացման աստիճանների ու տեսակների պարզացման ճշտութեամբ։ Դասախօսութեան ընթացքում ցոյց էր տալիս մոգական լապտերով գրի տեսակներ, գեղեցիկ գրչութեան օրինակներ և շքեղ ու զարդարուն կազմեր։ Դասախօսութիւնը լաւ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրայ, հետաքրքրական էին նաև մոգական լապ-

տեղով ցոյց տրուած նկարները։ Դատախօսութեան ընդմիջումին երգեց երգիչ պ. Նալբանդեան հանգիստականների բուռն խնդրանօք և տիկ. Գարագաշի դաշնամուրի նուագակցութեամբ, ինչպէս որ տեղի էր ունեցել նախորդ երեկոյեան, Տ. Կարապետ եպիսկոպոսի դատախօսութեան ժամանակ, երկուսն էլ վարձատրուեցին ծափահարութիւններով։ Բաւական ուշ ցրուեցին պատգամաւորները և հիւրերը և հետևեալ օրը, երկուշաբթի առաւօտեան, նրանցից շատերը չկային այլ ևս, հեռացել էին ս. Էջմիածնից՝ տանելով իրենց հետ քաղցր յիշողութիւններ։

Երկուշաբթի օրն արդէն տօնի տպաւորութիւն չէր թողնում, էլ Յոբելեանական օր չէր, այլ «օր ուղղագրութեան» հայոց լեզուի։ Մնացած սակաւաթիւ պատգամաւորների, լեզուական—ուղղագրական հարցով հետաքրքրուող ինտելիգենտ հիւրերի, գլխաւորապէս ուսուցիչ ուսուցչուհիների և ճեմարանի բարձր դասարանի ու լսարանցիների ներկայութեամբ ճեմարանի ուսուցիչ պ. Մ. Աբեղեանը դատախօսեց հայ լեզուի ուղղագրութեան մասին։ Դատախօսը ցոյց տալով մի ընդհանուր ուղղագրութիւն ունենալու անհրաժեշտութիւնը արևելեան և արևմտեան հայերի մէջ՝ կանգ առաւ ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելու խնդրի վրայ և մանրամասն կերպով յիշատակեց, թէ ինչ փոփոխութիւններ կարելի է մտցնել ուղղագրութեան մէջ, որ բառերի պատկերներն առհասարակ աննշան փոփոխութիւն կրեն և ընդունուեն եթէ ոչ բոլորի, գոնէ գրագէտների մեծ մասի կողմից։ Ուղղագրութեան հարցը շատ փափուկ խնդիր է և մանրակրկիտ պարզաբանութեան կարօտ. եթէ ժամանակն ուշ չլինէր, անշուշտ տեղի կունենային հետաքրքրական վիճաբանութիւններ. բայց դժբախտաբար այնքան ուշ էր, որ ոչ պ. Ս. Մալխասեանի դատախօսութիւնը տեղի ունեցաւ նոյն խնդրի շուրջը և ոչ էլ կարդացուեցին ուրիշ հայագէտների, ի միջի այլոց Մեյեյի և Մառի զեկուցումները կամ կարծիքներն այդ խնդրի մասին։ Դատախօսութիւնից յետոյ մի խորհրդակցութիւն եղաւ ճեմարանի ուսուցիչ պ. Ս. Կանայեանի նախագահութեամբ և փորձ եղաւ որոշ եզրակացութեան գալու հայ ուղղագրութեան վիճակը որոշելու նկատմամբ, բայց սակաւ թէր և դէմ կարծիքներից յետոյ որոշուեց թողնել այդ խնդիրը երեկոյեան մի նեղ շրջանի—հայագէտների և հայագիտութեամբ զբաղուողների—խորհրդակցութեան։ Ինչպէս լսում է, երեկոյեան խորհրդակցական ժողովը որոշել է դիմել Վեհափառ Հայրապետին, հրաւիրել ս. Էջմիածին հայագէտների զանազան կողմերից, որոնք և կը լուծեն այդ ծանր խնդիրը։

Վերջացաւ «ուղղագրութեան օրը», վերջակէտ դրւեցաւ նաև ազգային Մեծ Յոբելեանի տօնակատարութեան։ Ցրւեցան պատգամաւորներն ու հիւրերը՝ տանելով իրենց հետ քաղցր յիշողութիւններ և անմոռանալի տպաւորութիւններ։ Մի բան միայն այժմ զբաղեցնում է հաւասարապէս գնացողներին և մնացողներին. որչափով հայ ժողովուրդը կարող եղաւ ցոյց տալ, որ արժանի է քաղաքակրթութեան հասունութեան վկայականին, որին ձգտում է տասնեակ տարիներ։ Այդ հարցին պատասխանել կարող է դպրոցական ֆոնդի համար հաւաքւած գումարի քանակը...

Բարի ճանապարհ, հայ ժողովրդի ներկայացուցիչներ, հայ պատգամաւորներ. հայ տառերի 1500 ամեայ և հայ տպագրութեան 400 ամեայ ազգային Մեծ Յոբելեանի յիշատակը թող անեղծ մնայ ձեր սրտերում և խթան լինի, որ աշխատէք, ըստ չափու կարողութեան, ընդհանուրի, գեղջուկի թէ բանւորի սեփականութիւն դարձնել հայ գիրը, հայ գրականութիւնը, հայ լեզուն. Ջանանք դպրոցական ցանցով պատել մեր երկիրը և իրականացնել ընդհանուր, ձրի և պարտադիր ուսումը։

Հ. Յովակիմեան.